Հավելված N 4
ՀՀ առողջապահական և աշխատանքի
տեսչական մարմնի ղեկավարի
2020 թվականի փետրվարի 20-ի N 152 - Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ, ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետև՝ Տեսչական մարմին) ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչությունը (այսուհետև՝ Վարչություն) Տեսչական մարմնի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից է:
2. Վարչության կանոնադրությունը հաստատում է Տեսչական մարմնի ղեկավարը:
3. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեսչական մարմինների մասին» օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով, Տեսչական մարմնի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

II.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Վարչության գործունեության հիմնական նպատակն է՝

1) Տեսչական մարմնի վերահսկողության ենթակա բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում (այսուհետ Ոլորտ) ռիսկի կառավարումը, գնահատումը և ստուգումների պլանավորումը:

5. Վարչության գործունեության հիմնական խնդիրներն են՝

1) վիճակագրական տվյալների ամփոփումը և վերլուծությունը, Տեսչական մարմնի վերահսկողության բնագավառում գործող տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքների իրականացումը և վերահսկողական ու հսկողական գործառույթների նպատակադրումը դեպի առավել ռիսկային ոլորտները, տնտեսավարող սուբյեկտները,

2) Տեսչական մարմնի կանոնադրական գործառույթների իրականացման արդյունքում տնտեսավարող սուբյեկտների, ըստ ոլորտի ռիսկի աստիճանի նվազեցումը՝ մինչև առավել ցածր հնարավոր ռիսկի մակարդակը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Վարչության գործառույթներն ուղղված են սույն կանոնադրությամբ սահմանված նպատակի և խնդիրների իրագործմանը:

7. Վարչությունն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) տնտեսավարող սուբյեկտների տվյալների բազայի ստեղծման, պարբերաբար թարմացման աշխատանքների իրականացում, ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչների և ռիսկայնությունը որոշող չափանիշների՝ սահմանելով, բացահայտելով և վերլուծելով Տեսչական մարմնի վերահսկողության ենթակա բնագավառների ռիսկերը,

2) խախտումների պարբերականության, խախտումների վերացմանն ուղղված գործողությունների վերաբերյալ տվյալների բազայի ձևավորման և պարբերաբար թարմացման աշխատանքների իրականացում, ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչների,

3) Տեսչական մարմնի վերահսկման Ոլորտում գործող բոլոր տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնության դասակարգումը ըստ տնտեսավարող սուբյեկտների, ինչպես նաև հսկողական գործառույթների նպատակադրում դեպի առավել ռիսկային ոլորտներ և վերահսկման ենթակա տնտեսավարող սուբյեկտներ,

4) Տեսչական մարմնի վերահսկվող տնտեսավարող սուբյեկտներում ռիսկի գնահատման և արդյունքների վերլուծության ապահովում,

5) Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներից տնտեսավարող սուբյեկտներում կատարված ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքների հավաքագրում և դրա հիման վրա սահմանված մեթոդաբանությամբ ռիսկերի հետագա գնահատում,

6) կառուցվածքային ստորաբաժանումների և շահագրգիռ պետական կառույցների միջև Տեսչական մարմնի կողմից իրականացվող պետական վերահսկողության արդյունքների հիման վրա ռիսկի կառավարման և դրանց վերաբերյալ տեղեկատվության փոխանակման աշխատանքների իրականացում,

7) Տեսչական մարմնի կողմից վերահսկվող տնտեսավարող սուբյեկտների տվյալների, ինչպես նաև Ոլորտի վիճակագրական տեղեկատվական բազաների ստեղծման և վարման աշխատանքների իրականացում,

8) Տեսչական մարմնի վերահսկման ոլորտում գործող բոլոր տնտեսավարող սուբյեկտների դասակարգումը ըստ ռիսկայնության և վերջինիս հիման վրա ստուգումների տարեկան ծրագրի կազմում,

9) Ստուգումների կազմակերպում, ստուգումների (այդ թվում Ռիսկի վրա հիմնված) հաշվառման հետ կապված համապատասխան ձևաթղթերի հանձնարարագրերի, հրամանների, ակտերի, որոշումների, կարգադրագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի կազմում, ստուգման արդյունքների հաշվառում,

10) Տեսչական մարմնի կանոնադրական գործառույթների իրականացման արդյունքների վերաբերյալ, վիճակագրական տվյալների հավաքագրման, ամփոփման, պահպանման և դրանց հիման վրա Ոլորտի վիճակագրության վարման հետ կապված աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում սահմանված ժամկետում և կարգով հաշվարկ-հաշվետվությունների, ինչպես նաև օրենքով սահմանված այլ տեղեկատվություններ պարունակող ձևերի ներկայացում համապատասխան պետական մարմիններին և Տեսչական մարմնի ղեկավարին,

11) Վարչության կանոնադրական գործառույթներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի մշակման աշխատանքների իրականացում,

12) Վարչության գործառույթներից բխող և Տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական

ակտերով ու սույն կանոնադրությամբ նախատեսված այլ աշխատանքների ապահովում:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Վարչությունը կառավարում է Տեսչական մարմնի ղեկավարը:
9. Վարչությունը գործում է Վարչության պետի անմիջական ղեկավարությամբ:
10. Վարչության պետն անմիջական հաշվետու է Տեսչական մարմնի ղեկավարին:
11. Վարչության կողմից ստեղծված փաստաթղթերը ստորագրում է Տեսչական մարմնի ղեկավարը:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

12. Վարչության կառուցվածքում ներառված չեն ներքին կառուցվածքային միավորներ: